

Հնդունելության թեստի նմուշօրինակ
2018-2019 ուստարի

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ (VII դասարան)

ՄԱՍ I. Հնտրովի պատասխանով առաջադրանքներ (1-15)

1. Ո՞ր թիվը պետք է գումարել $2\frac{2}{3}$ -ին, որպեսզի ստացվի $7\frac{8}{9}$:

1) $5\frac{2}{9}$

2) $5\frac{1}{9}$

3) $5\frac{4}{9}$

4) $4\frac{2}{3}$:

2. Գտնել ամենամեծ երկնիշ և ամենափոքր քառանիշ թվերի գումարը:

1) 1098

2) 1100

3) 1099

4) 1097

3. m -ի հնչ արժեքի դեպքում է $(2m+1)$ արտահայտության արժեքը 8-ով մեծ $(m+7)$ արտահայտության արժեքից:

1) 14

2) 13

3) 15

4) 30

4. 27 սմ 8 մմ ինչքանո՞վ է մեծ 138 մմ-ից:

1) 13սմ 7 մմ

2) 14սմ 8 մմ

3) 14 սմ

4) 7 մմ

5. Որքա՞ն է կազմում տոննայի $\frac{27}{100}$ մասը:

1) 27 կգ

2) 2 g 7կգ

3) 2g 70 կգ

4) 20 g 70 կգ

6. Ո՞ր թվանշանով է վերջանում 5-ի վրա բաժանվող կենտ թիվը:

1) 3

2) 0

3) 5

4) 7

7. Որքանո՞վ է 1-ից տարբեր յուրաքանչյուր բնական թվի հաջորդ թիվը մեծ այդ բնական թվի նախորդ թվից:

1) 2

2) 1

3) 3

4) 0

8. Գտնել 20-ից փոքր բոլոր կենս երկնիչ թվերի գումարը:

- 1) 95 2) 65 3) 85 4) 75

9. 1 մետրի քանի՞ տոկոսն է 1 դեցիմետրը:

- 1) 1 2) 10 3) 11 4) 15

10. 100 կգ ծովաջուրը պարունակում է 15 կգ աղ: Քանի՞ տոկոս է ջուրը ծովաջրում:

- 1) 35% 2) 85% 3) 15% 4) 25%

(11-12) Գտնել արտահայտության արժեքը:

11.
$$\frac{\left(4\frac{3}{10}\right)\left(-2\frac{41}{50}\right)}{\left(-2\frac{1}{70}\right)\left(1\frac{18}{25}\right)}$$

1) $\frac{15}{10}$ 2) $\frac{25}{10}$ 3) $\frac{35}{10}$ 4) $\frac{45}{10}$

12.
$$|-50| + |-4|$$

1) -54 2) 54 3) 46 4) -46

(13-15) Հավասարումներ և անհավասարումներ:

13.
$$2 \cdot (x + 3) = 6 - x$$

1) -1 2) 1 3) 0 4) 2

14.
$$\frac{2}{3} \cdot (3x - 5) = 6 + x$$

1) $9\frac{1}{3}$ 2) 1 3) 0 4) 3

15. Գտնել բոլոր բնական թվերի գումարը, որոնք $1\frac{2}{3} < x < 5\frac{4}{7}$ անհավասարման լուծումներն են:

- 1) 15 2) 14 3) 10 4) 7

ՄԱՍ II. Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ (16-20)

(16-20) *Առաջադրանքների կատարման համար յուրաքանչյուր առաջադրանքներից հետո պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքը:*

16. Խորանարդի բոլոր կողերի երկարությունների գումարը 132 սմ է: Գտնել նրա ծավալը:

Պատ.՝-----

17. Ինքնաթիռը երկու քաղաքների միջև եղած հեռավորությունն անցել է 3 ժ 20 ր-ում: Եթե ինքնաթիռի արագությունը 200 կմ/ժ-ով ավելին լիներ, ապա նույն հեռավորությունը այն կանցներ 2ժ 30 ր-ում: Որքա՞ն էին ինքնաթիռի արագությունը և քաղաքների հեռավորությունը:

Պատ.՝-----

18. Երկու վարպետներ, աշխատելով առանձին, կարող են կատարել նույն աշխատանքը համապատասխանաբար 10 և 12 օրում: Աշխատանքի ո՞ր մասը կկատարեն վարպետները՝ մեկ օր աշխատելով միասին:

Պատ.՝-----

19. Մի քաղաքից մյուսը միաժամանակ ուղևորվեցին երկու մեքենաներ. առաջինի արագությունը 85 կմ/ժ էր, երկրորդինը՝ 70 կմ/ժ: Երբ առաջին մեքենան տեղ հասավ, երկրորդին մնում էր անցնելու 30 կմ: Գտնել քաղաքների հեռավորությունը:

Պատ.՝-----

20. Մետաղե ձողի երկարությունը 0° ջերմության դեպքում 1,5մ է, իսկ 100° ջերմության դեպքում դառնում է 1,71 մ: Քանի՞ տոկոսով է երկարում ձողը ջերմաստիճանը 1° -ով բարձրացնելիս:

Պատ.՝-----

Մագրություն